

## 2. ԽԱԼԱՓՅԱՆԻ «ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՎ ՇԱՄԻՐԱՄ» ՎԵՊԸ

«Արա Գեղեցիկ և Շամիրամ» (1998) վիպասքը Ջորայր Խալափյանն անվանել է սիրավեպ, որ պետք է քննել առաջին հերթին իննսունականների արձակի համատեքստում: Այն զուրկ չէ ժամանակահատվածի հայ գրականությանն այնքան բնորոշ էրոտիզմից: Էրոտիզմը, երբեմն նույնիսկ գոեհկության հասնող նատուրալիստական նկարագրությունները, որ, հասկանալի պատճառներով, բնորոշ են թե՛ անկախության, թե՛ վաթսույն-յոթանասունականների սերնդի արձակին, տարբեր գեղագիտական և գաղափարական միտումներ են արտահայտում: Եթե Նորայր Ադալյանի «Դավայաթաղ», Գուրգեն Խանջյանի «Հիվանդանոց» և Ալեքսանդր Թոփչյանի «Կիրկե կղզին» վեպերը՝ որպես իննսունականների իրականության, հասարակական այլասերման գեղարվեստական արտացոլում, հաղթահարում են իրականության գեղարվեստական պատկերման սահմանափակումները, ապա Զ. Խալափյանի «Արա Գեղեցիկ և Շամիրամ» (ինչ-որ չափով նաև Ալեքսանդր Թոփչյանի «Կիրկե կղզին») վեպը հաղթահարում է միջերի մեկնության տաբուները: Բայց այս երկերը միավորվում են նաև մի ընդհանուր գաղափարական միասնության շուրջ. այն, որ մարդկության («Կիրկե կղզին»), հասարակության («Հիվանդանոց», «Դավայաթաղ»), պատմության («Արա Գեղեցիկ և Շամիրամ») շարժիչ ուժը դառնում է լիբիդոն:

Բաց նկարագրությունների տեսանկյունից Խալափյանի վեպը նշվածներից թերևս ամենագուսպն է. էրոտիզմն այստեղ քողարկված է գեղեցիկ ալեգորիաներով: Արա Գեղեցիկի և Շամիրամի սեռային հարաբերությունների բաց տեսարանների նկարագրության փոխարեն հեղինակը նախընտրում է պատմել ժամանակի ոգուն ու ոճին բնորոշ փոխաբերական պատկերագրությամբ: Այսպես են ահա բանալու անցքից դիտող նկարիչները պատկերում Արա Գեղեցիկի և Շամիրամի սեռահարաբերությունը. «Նինվեի աղյուսե պատերին սկսեցին նկարներ հայտնվել կավճով ու մրով արված. մի սպիտակ ցուլ հեծել է մի թուխ կովի: Սոսկալի պատկերավորությամբ կորացած ցլային մեջքից երևում էր, թե ինչ հզորություն է մխրճված կովի մարմնի

մեջ»<sup>1</sup>: Կամ՝ «Արքայազնը փոթորկի պես առաջ է նետվում, և Շամիրամը ծովի պես երկփեղկվում է նրա առաջ» (107): Էրոտիկ նկարագրությունները բնապաշտական համեմատություններով և այլասացությամբ են հանդես գալիս, քանզի թե՛ Արան, թե՛ Շամիրամը պաշտվել են որպես աստվածություններ. եթե Արան, որպես մեռնող-հառնող, ապա Շամիրամը՝ որպես կերպարանափոխվող: Ըստ Դիոդորոս Սիկիլիացու, Շամիրամն աստվածացել և կերպարանափոխվել է աղավնու և դրա համար էլ ասորացիները, իբրև աստված պաշտել են աղավնուն՝ Սեմիրամիսին<sup>2</sup>: Մյուս կողմից այդ այլասացական ոճը, որ քողարկում է էրոտիկ նկարագրությունը, առասպելի ոճ և պատկերամտածողություն է, հենց այս կոնտեքստով էլ գրողը վեպում հիշատակում է Կիրկեի մասին առասպելը՝ ինչ-որ իմաստով երկխոսության մեջ մտնելով Ալ. Թոփչյանի ստեղծագործության հետ. «Մերկ բառն այնքան է արտահայտիչ, որքան կարող է արտահայտիչ լինել մերկությունն առհասարակ, հատկապես կնոջ ու տղամարդու մերկությունը: Վկա Սապֆոն, Օվիդիոսը, Վարուժանը: Ոմանք ասում են՝ մշտապես գտնվելով ցանկասիրության շմուքի ներքո, ընթերցողը մոռացության է տալիս ամեն ինչ, բացի մերկ տեսարաններից, և որ մարդու վրա տպավորություն գործելու ձևերից մեկն էլ նրա ճաշակն արհամարհելն է: Սակայն կա ուսանելի մեկ այլ պատմություն. կախարդուհի Կիրկեն, Ոդիսևսի ուղեկիցներին սեռասիրության մուլուցքի հասցնելով, նրանց փոխակերպեց անասունների՝ տալով նրանց իսկական պատկերը: Սակայն Ոդիսևսը մարդկային իր բարձր արժանիքները պահպանելով՝ նույնին հասցրեց հենց գեղեցկուհուն, անմահ դիցուհուն դարձնելով իր ձեռնասուն էգը» (104): Գոեհկության այդ տպավորությունը ստեղծելու, այլասերված հասարակության փոխակերպումը կամ նրա «իսկական պատկերը» ցույց տալու միտումով Ալ. Թոփչյանը չի խորշում նատուրալիստական նկարագրություններից: Եթե Խալափյանը նախընտրում է առասպելի ոճով քողարկել բաց նկարագրությունները, ապա Թոփչյանը հակառակն է անում՝ բացելով առասպելի մեջ քողարկված էրոտիկան: Խալափյանը Կիրկեի առասպելը մեջբերում է ցույց տալու համար, որ այլասացությունը, թերևս, ավելի տպավորիչ է, քան մերկապարանոց

<sup>1</sup> Խալափյան Զ., Արա Գեղեցիկ և Շամիրամ, Ե., 1998, էջ 103: Հետագա հղումները կնշվեն փակագծերում:

<sup>2</sup> Դ. Սիկիլիացի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 14, Հին հունական աղբյուրներ, Ե., 1985, էջ 30:

նկարագրականությունը, քանի որ այլասացությունն ամենամեծ ծառայությունը մատուցում է ընթերցողի երևակայությանը:

Գրողը չի հավակնում առասպելի պատմական շերտի քննության, հետևապես սխալ կլինի «Արա Գեղեցիկ և Շամիրամ» վեպի ժանրը տարբերակել իբրև պատմավեպ, չի հավակնում նաև առասպելի բարոյական մեկնության, հետևապես սխալ կլինի այն համարել առակախոսություն: Այս առումով Խալափյանի երկը էականորեն տարբերվում է գրական նախորդ՝ թե՛ չափածո, թե՛ դրամատիկական մշակումներից: Նաիրի Զարյանը, օրինակ, իր իսկ խոստովանությամբ առասպելը փորձել է դնել «պատմական պատվանդանի վրա»: Մինչդեռ Խալափյանը փորձում է ստեղծել նոր առասպել, ինչպես «Մեռնող հառնող»-ում է ասվում. «Պատմելով ստեղծում ես նոր առասպել»<sup>2</sup>: Խալափյանի մտադրությունն ակնհայտ է. «Արա Գեղեցիկ և Շամիրամ» վեպով նոր, ծավալուն և առավել հավաստի ու ճշմարտանման առասպել ստեղծելն է, առասպել, որ սիրո ծագման, մահվան և հարության մասին է: Ուստի մենք գրողի այս երկը կդիտարկենք ոչ թե որպես պատմավեպ, ինչպես արել է գրականագետ Սիրանուշ Մարգարյանը<sup>3</sup> արդի պատմավեպին նվիրված մենագրության մեջ, այլ որպես «դիցապատմական սիրավեպ»<sup>4</sup>, որ գրողի ստեղծագործության համատեքստում ավելի շատ առնչվում է «Մեռնող հառնող» վեպին, քան «Վասիլ Մեծ, հայ կայսր Բյուզանդիայի կամ Կոնստանդինոպոլիսի թագավորը» պատմավեպը:

Ընդ որում, առասպելը կարծես պատմագրական տեքստի մեջ է առնված, Մ. Խորենացու նմանությամբ. Խալափյանը դիմում է պատմագրության ոճավորման՝ հաճախ կիրառելով իբրև թե անհայտ աղբյուրներից հղում կատարելու ոճական հնարանքը, հաճախ էլ հղում կատարելով մտացածին պատմիչ Նակարոսա Նույթումտապին՝ անուն, որ դժար չէ կռահել՝ հակառակ կարդացվելիս ստացվում է *ասորական* (Նակարոսա) *պատմություն* (Նույթումտապ), միաժամանակ հեղինակը «քննական» մոտեցում է ցուցաբերում առասպելի նկատմամբ: Բազմաթիվ կերպարներ և դեպքեր պատմականորեն հավաստի են, և գրողն անշուշտ ըստ ամենայնի ուսումնասիրել ու ըստ վեպի գաղափարական մտահղացման փոփոխել է ժամանակաշրջանի մասին պատմական որոշ տեղեկություններ, և այսքանով երկը կարող է ընթերցվել նաև

<sup>1</sup> «Երեկոյան Երևան», օրաթերթ, 1968թ., հունվարի 15:

<sup>2</sup> Խալափյան Զ., Մեռնող հառնող, Ե., 1975, էջ 366:

<sup>3</sup> Տե՛ս Մարգարյան Ս., Պատմության ժամանակը, Ե., 2000, էջ 118-154:

<sup>4</sup> Նույն տեղում՝ էջ 119:

իբրև պատմական իրականության գեղարվեստական մի վարկած, որ ի վերջո ցանկացած պատմավեպի գործառույթն է: Հնարավոր իրականության վարկածը կամ ամենամեծ փոփոխությունը, որ Խալափյանն արել է հանուն նոր առասպելի, ամենամեծ մեղանշումը «իրական» առասպելի դեմ՝ Արա Գեղեցիկի և Շամիրամի հանդիպումն է. Արա Գեղեցիկի առերես հանդիպման ու կայացած սիրո մասին աղբյուրագիտական հիշատակություն, հայտնի է, որ չկա: Արձակագրի վեպը կառուցվում է հենց տեղեկության կամ «վարկածի» շուրջ՝ այն, որ Արա Գեղեցիկն ու Շամիրամը հանդիպել և երկար ժամանակ սիրել են միմյանց, ավելին, ըստ Խալափյանի *վիպառասպելի*<sup>1</sup> այս երկու սիրահարներից է հենց դուրս եկել սերը, և այսքանով է նաև, որ երկը հավակնում է առասպելի. քանի որ երևույթ է կերպավորում: Հիրավի սա վիպերգ է սիրո, մահվան ու հարության մասին, և կերպարներն այստեղ հավերժական ռեալիաների առասպելական գործառույթներ են. նրանք աստվածացվում են, և քանի որ ավելի շատ օժտված են հեթանոս աստվածների գծերով, քան մարդկային կամ հերոսական հատկանիշներով, ինչպես Նաիրի Զարյանի դիցապատմական ողբերգության մեջ, օրինակ, որում Արան ոչ թե աստված է, այլ վեհ, բայց իր վեհության մեջ դիցապատմական մի հերոս: Եվ Շամիրամը նույնպես: Խալափյանի վեպում նրանք թվում են աննյութ, անհողեղեն և անմարմին. ավելի շատ երևույթների բնութագրեր են, քան մարդկային կերպարներ: Այսպես, Շամիրամը Օնեսին թվում է երագ, Արան էլ, թվում է, Շամիրամի պատրանքն է, և նրանց հանդիպումն իրականում բնավ չի էլ կայացել:

Հեղինակը վեպն սկսում է Շամիրամի աստվածային ծագման մասին պատմող առասպելով: Մայրը՝ արգասավորության ու պտղաբերության Դերկետո աստվածուհին, իբրև թե սիրո և գեղեցկության աստվածուհի Ափրոդիտեն հանդիմանում է անպարկեշտ բարքի համար. «Վայե՛լ է աստվածուհուն այդ անպարկեշտ վարքը, անհագուրդ տոփանքը, քո Հեփեստոս ամուսնուն ամեն քայլափոխի դավաճանելը, մի՞թե կարելի է օրնիրուն զբաղվել մարմնական հեշտանքի ու հաճույքի խաղերով» (8): Եվ իբրև թե, Ափրոդիտեն պատասխանում է նրան. «Դու արգասավորության ու պտղաբերության աստվածուհին ես, Դերկետո, քո շնորհիվ է, որ աշխարհ է գալիս ամենայն բարիք ու ծնունդ, կենդանությունն ու բուսականությունը քեզ են պարտական իրենց գոյությունը, և չգիտես - անտեղյակ ես, որ այդ ամենի հիմքը սերն է, ամենամեծը

---

<sup>1</sup> Մեր կարծիքով ժանրային բնորոշման նման եզրերը կարող են հարստացնել վեպի ժանրի մասին պատկերացումները:

վայելքներից, որ միայն աստվածներին է տրված... Մարդն իր գոյության իմաստը միայն սիրո միջոցով է, որ կարող է ընկալել, սակայն աստվածներն արգելել են նրանց ճաշակել այդ քաղցր ու դառն ըմպելիքը, որպեսզի նրանք մշտապես մնան անասնական աշխարհում» (9): Եվ ըստ Խալափյանի, Ափրոդիտեն այնպես է անում, որ Դերկետոն սիրահարվի առաջին պատահած մահկանացուին՝ «արևից խանձված դեմքով» մի ողորմելի շրջմուխի, որից էլ մայրանում և աշխարհ է բերում Շամիրամ դստերը, ապա լքում նրան:

Շամիրամը, փաստորեն, ներկայացվում է որպես սիրո ծնունդ, որպես արգասավորության և պտղաբերության աստվածուհու մարդկային մարմնի մեջ հայտնված դուստր՝ ըստ Խալափյանի մահկանացուների սրտում սերը տարածելու առաքելության համար աշխարհ կոչված, քանի որ մինչ այդ սերը ճանաչելու բերկրանքն աստվածներին էր տրված միայն: Շամիրամին կերակրում են աղավնիները, մինչ նրան կգտնեն արքայական հոտերի ու նախիրների վերակացու Սիմմայի հովիվները և կհանձնեն իրենց տիրոջը: Սիմմայի անունով էլ երեխային անվանում են Սեմիրամիս, իսկ աղավնիների աղերսով նաև՝ Շամիրամ: Արքունի գրագրապետ Օնեսը, լսելով տասնհինգամյա Շամիրամի գեղեցկության մասին, գալիս և նրան դարձնում է իր կինը: Օնեսը պատմական անձնավորություն է, Նինոս արքայի օրոք ասորական արքունիքի խորհրդի անդամների մեջ առաջինը և նշանակված է եղել Սիրիայի կառավարիչ: Շամիրամը, կարծես, զգում է, որ Օնեսի կինը լինելով, ավելի բարձր է նրանից, անընդհատ հետաքրքրվում է արքայի գեղեցկությամբ, ամուսնու հետ գրեթե չի խոսում և աշխուժանում է միայն արքայի անունը լսելիս. կանացի անզուսպ մի հետաքրքրություն է հասունանում նրա մոտ՝ տեսնելու արքային, որ գեղեցիկ է «ավելի՝ քան անցյալի, ներկայի ու գալիքի բոլոր տղամարդիկ. նա մեծագույնն է արքաների մեջ, և դա նրա ամենամեծ գեղեցկությունն է: Նա հաղթող է, նրա զայրույթից երկրներ են խանձվում ու հրկիզվում: Նրա բարեհաճությունից անապատներ են ծաղկում: Նրա մատի շարժումը հազարների ապրելու ու չապրելու նշան է: Նա գեղեցիկ է, բարի է, ցասկոտ է, ներող է ու չներող, նրա հայացքը կայծակ է, ամեն մի շարժումը՝ երկրաշարժ: Առյուծներն անգամ հնազանդ են նրա ձայնին, նրա հրամանով նժույգները թևավոր են դառնում ու ճախրում օդում: Նա անհաս է, սլանում է փոթորկից արագ, հողմից վայրագ ու վրահաս է ամենուր արեգակի լույսի նման» (16),– ինչպես

<sup>1</sup> Դ. Սիկլիփացի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 14, Հին հունական աղբյուրներ, Ե., 1985, էջ 10:

բնութագրում է նրան Օնեսը: Իսալափյանն անշուշտ օգտվել է Դիոդորս Սիկիլիացու այն հաղորդումից, թե Նինոսը, լսելով դեռատի կնոջ գեղեցկության մասին, Օնեսին և նրա կնոջը կանչում է իր մոտ և Շամիրամի գեղեցկության հմայքով դյուրված՝ վերջինիս դիմաց Օնեսին կնության է առաջարկում իր Սոսանե դստերը<sup>1</sup>: Օնեսն արքային ներկայանալու ժամանակ հուզված է, իսկ առաջին անգամ արքունիք ուռք դրած «Շամիրամն այնպես հանգիստ էր, անգամ անտարբեր, ասես առաջին անգամը չէր արքունի մեծ պալատներում, այս վերամբարձ, գունազարդ խորաքանդակներով պատերը, նկարկեն հատակը, ոսկեգօծ իրեղենը, որ ճոխության ու հարստության պատրանքի համար ցուցադրվում էին ամեն քայլափոխի, ջահերի տատանվող լույսերից կենդանացած արձանները, որ Աշուրի իրականությանն առասպելական իմաստ էին հաղորդում, մնջորեն անցուդարձող սպասարկուները, թվում էր այս ամենը վաղուց տեսած ու ծանծրացած» (28):

Արքայի հետ խոսելիս Շամիրամն ինքնավստահ է, համարձակ ու աներկյուղ, սեփական գեղեցկության ու հմայքի բացառիկ վստահությամբ կամ «կանացի այն ինքնավստահությամբ, որ թեկուզ մեկն արքա, մյուսը հասարակ հովվի աղջիկ, ամենագլխավորում, որ վերաբերում է էգ ու որձին, տղամարդուն ու կնոջը, ինքը հավասար է՝ հավասարի հետ, գուցե ավել» (24): Բավական անբռնազբոսիկ է Շամիրամի կեցվածքն ու վարքը Նինոսի առջև, և արքան ինքն էլ է զարմացած նրա այս հանդարտության ու անխռովության վրա, երբ ուրիշ մեկը կկորցներ խոսելու ընդունակությունը: «Արքան ասես արքա չէր այստեղ, այս ամենի տերուտիրականը ինքն է: Օնեսը չէր դադարում ամեն առիթով զարմանալ Շամիրամի վրա, բայց այդ օրը նրա զարմանքը սահման չունեց» (28-29): Եվ Օնեսի հարցին, թե ինչու չի հուզվում արքային տեսնելուց առաջ, դեռատի կինը պատասխանում է այսպես. «Ինձ ի՞նչ արքաները, եթե ես տեսել եմ աստվածներին» (29): Ն. Ջարյանի «դիցապատմական ողբերգության» մեջ, Շամիրամը մարդկային կրքերով օժտված, վավաշոտ մի բռնակալ է, որ կարող է զայրանալ, երբ Արան մերժում է իրեն, իսկ Իսալափյանի վեպում անընդհատ զարգանում, խորանում է այս կերպարի աստվածային ծագումն ու բնույթը հաստատող գիծը: Դառնալով թագուհի՝ նա հովանավորում ու խրախուսում է իր նաժիշտների սիրային արկածները, ինչպես սիրո հովանավոր մի աստվածուհի, խանդում է Նինոսի կանանց հավատարմությունն իրենց ամուսնուն և նույնիսկ նրանց դրդում անհավատարմության: Սա կերպարի նոր

<sup>1</sup> Լույն տեղում, էջ 21:

մեկնակերպ է. Խալափյանի կերտած Շամիրամը վավաշոտ է և «շամ-բշոտաշուրթ», նա «գույթ չունի, մեռնողները նրան չէին վշտացնում, ծնվողներն ուրախացնում, ո՛չ տափաստանի ավազը երկինք հանող փոթորիկներից էր սոսկում, ո՛չ բերկրում ծիածանի ու արևի լույսերի խառը խաղով» (29): Նա վեր է այն ամենից, ինչ մարդկային է և երկրային, նրա հանդարտությունն «օլիմպիական» անխռովություն է, իսկ կիրքն ու ցանկասիրությունը՝ սիրո դիցուհու երկնային պահանջմունք: Երբ Արան ուզում է հեռանալ հայրենիք ու լքել նրան, Շամիրամը ծնկաչոք աղերսում է չհեռանալ, չի զայրանում նույնիսկ այն ժամանակ, երբ Արան, ծանծրագած նրա սիրուց և կարոտելով իր հողը, վերադառնում է հայրենիք: Մինչդեռ Ջարյանի դրամայում Շամիրամը զայրանում և պատերազմ է հայտարարում Արային. ահա այս ցատումն է, որ սիրատարփ Շամիրամի մեջ չի գտնում արձակագիրը:

Այսուհանդերձ, ուշագրավ մի համընկնում Ջարյանի դրամայի հետ, որտեղ Շամիրամի մասին ասվում է. «Դեմքով մի աղավնի է նա, հոգով՝ առյուծ»: Առյուծի և աղավնու պատկերներն ու համեմատություններն անցնում են նաև Խալափյանի վեպով, իսկ ահա ինչ է ասում, ասես, Ջարյանի տողերին ծանոթ Օնեսը Շամիրամին. «Օ՛, Շամիրամ, դու ավելին ես, քան առյուծ և մեր անհաղթ արքան վաղ թե ուշ քո որսաբաժինն է դառնալու» (43): Նույնիսկ կարծես Ջարյանի դրամայի ռիթմով է ասված: Այսպես, կարևոր է, որ այս կնոջ հետ վեպում կապվում է հենց սիրո և մահվան սկիզբը: Նինոսը հանկարծ երիտասարդանում է, ամեն գիշեր նա մեռնում-հառնում է: Նա ճանաչում է սերը և գիտակցում հանկարծ, որ ինքն այլևս արքա չէ, այլ ստրուկ. «Ես արքա եմ ու արքա չեմ, դու ես: Սիրելը վայել չէ արքաներին, սիրո ստրուկը դարձյալ ստրուկ է, դա մահացու է արքաներին, և ես չգիտեմ վաղվա իմ օրը: Թող չքվի սերը» (37): Այս խոսքերը հիշեցնում են Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի. «Այդ քաղցր թույնը, որով արբողը ստրուկ է դառնում և կամ բռնակալ» տողը: Վեպում, քանի որ այն դիցապատմական սիրավեպ է, իսկ ժանրային որոշարկումն ընթերցում է առաջարկում, սիրո փիլիսոփայությունը նորանոր կողմերով է բացահայտվում: Ինչպես դիպուկ նկատել է գրականագետ Ս. Մարգարյանը, Խալափյանն այս վեպում «սիրո զգացմունքի տարերքը» հասցնում է «մինչև կեցության բացարձակ հասկացության»:

Շամիրամն, ըստ այս սիրավեպի, առաջին անգամ սեր է բերում աշխարհի, բայց սերը դեռ չի ճանաչում, և այսպես է Խալափյանը բացատրում նրա անհագուրդ կիրքն ու ցանկասիրությունը. մինչև սիրո լույս աշխարհ գալը սերը շփոթել են կրքի հետ: Այդպես է սիրո էությունը գեղեցկուհի խեթուհին բացատրում սիրուց անտեղյակ Արային. «Ես

կրթով վառյալ եմ ընդ քեզ»: Շամիրամը չի հագենում, որովհետև փնտրում է, ձգտում է գտնել ու ճանաչել սերը, և ճանաչելուց հետո նա հավատարիմ կին է, հավատարիմ է իր Արային: Եվ դրա համար էլ, մինչև Արային հանդիպելը, նա մահ է բերում բոլոր նրանց, ովքեր սիրել են իրեն: Մահը և այս կերպարը նույնական են դառնում. մահանում են պատանի հովիվը, որի հետ կենակցել է դեռահաս Շամիրամը, Օնեսի աշակերտ Գաղիշոն, Նինոսը, և ընդհանրապես «հնադարի առաջին բռնատիրուհին» «սիրում էր ձեռքից ձեռք անցնել, բայց երբ հասնում է, կատաղության, մտքով ինչ էր անցնում, փայլատակում էր կարճ թուրը նրա ձախ ձեռքին, քանզի նա ձախլիկ էր, և հերթական տարփածուն թավալվում էր մի կողմ» (51): Այստեղ նույնանում են երկու խոշոր բնագրական մղում, որոնց ետևում կանգնած են Էրոսն ու Թանատոսը՝ հոգեվերլուծության անկյունաքարային այս հասկացությունները՝ իբրև կյանքի առաջմղիչ ուժեր կամ հիմնական բնագրներ: Շամիրամը սեր կամ մահ է տենչում: «Մահ կամ սեր: Բայց դա նույնն է» (83),– ասում է նա՝ Արայի մասին մտորելիս: Եվ Շամիրամը չի ճանաչում սերը, մինչև չի լսում Արա Գեղեցիկի կամ Դիարայի մասին, իսկ ճանաչելով իսկական սերը, «մեռնել տենչացող Շամիրամը սկսեց հառնել» (55): Առանց սիրո մեռնելու այս մոտիվը կա նաև Ն. Ջարյանի դրամայում, բայց այնտեղ չկա հարության գաղափարը:

Արայի մասին Շամիրամին հայտնում է Օնեսը, որ իր կնոջը տալով արքային, դառնալով արքունիքի առաջին մարդն ու արքայի Սոսանե դստեր ամուսինը, Շամիրամի համար ուզում էր վրեժ լուծել արքայից: Շամիրամը սիրահարվում է Օնեսի նկարագրած տեսլական կերպարին: Արային նախ իր երազներում է տեսնում, և նրա պատկերացումները «մանուկ արքայի»<sup>1</sup> մասին, ոչ այլ ինչ են, եթե ոչ պատկերացում մեռնող և հարություն առնող բնության մասին.

«– Ահա ես տեսնում եմ լեռնոտ մի երկիր,– ասում է Շամիրամը:– Ահա մի լեռ, որի լանջին նա զբոսնում է ու նրա ոտքերի կոխած տեղերում ծաղիկներ են բուսնում, ու եղնիկները գազաթներից իջնելով թոչկոտում են այդ ծաղկունքի մեջ, թռչունները թևածում են նրա շուրջն ու գեղգեղում, ցամաքած ակունքներից աղբյուրներ են ցայտում:

- Դա գարունն է, տիրուհի, որ եկել է,– ասում էին նաժիշտները:
- Նա աստված է, նա իմն է, միայն իմը, ես նրանն եմ, միայն նրանը: ...Մի օր էլ Շամիրամը տրտմալի հառաչեց.

---

<sup>1</sup> Արային «մանուկ արքա» է անվանում Վահան Տերյանը. Խալափյանի վեպում Արան արքայազն է:

- Նա մեռավ: Ձմեռ է, ձյունը ծածկել է լեռները, ծաղկունքը թռու-մել, առունները քնել են սառցի տակ, թռչունները՝ չվել: Անասելի տխրալի է լեռներում և նա թախծից մեռավ: Մեռա՞վ, թե՞ քուն մտավ: Բայց ես նրան տեսնում եմ մեռած:

- Տիրուհի, մի՞թե աստվածները մեռնում են:

- Նա այն աստվածն է, որ մեռնում է ու կրկին հառնում գարնան հետ: Նրա սիրտը տրտմում է առանց լույսի, առանց գարնանային գույ-ների, թռչունների ճովոդյունների: Նա մեռնում է առանց սիրո, նրա սիր-տը տխրում է մենուֆայունից, աշխարհի ամայի տաղտուկից նա մեռնում է և հողի տակ սպասում է գարնան գարթոնքին:

Եվ ասես ինքը ևս մեռած էր, սուգ էր պահում և ասում, թե ինքը ևս մեռած է, ինքը չկա առանց այդ անհայտ թագավորի, որն ապրում է հե-ռու լեռնոտ երկրում:

- Իմ տափաստանը լեռներ է կարոտում, իսկ լեռները չգիտեն, որ ինչ-որ տեղ կարոտող տափաստան կա: Նա մեռած է: Ես մեռած եմ: Նրա հետ ես ևս կհառնեմ» (56):

Շամիրամի հորդորով Արային հոր հետ կանչում են Նինվե: Շամի-րամը խուսափում է հանդիպել պատանուն, իսկ Նինոսն, իմանալով Շա-միրամի սիրո մասին, գիշերով Արայի մոտ է ուղարկում արքունի ամե-նագեղեցիկ կնոջը՝ Բուցի-Հուրիին, որ անչափ նման է Շամիրամին և վավաշտությամբ չի զիջում նրան: Արտապատկերման այս հնարքը վե-պում խաղարկվում է քանիցս. ահա արքայի պալատի բարձր դռները հսկող վիթխարահասակ երկու խափշիկները, «այնքան նման, ասես մեկն արտացոլում է մյուսին» (30), ահա բաց երկնքի տակ մի լիճ՝ «եր-կու երկնքի պատրանք» (30). պատկերները կրկնօրինակվելով, ասես, առասպելականի և հեքիաթայինի մթնոլորտ են ստեղծում, գրողը վար-պետորեն հնագույն քաղաքակրթության կոլորիտ է ստեղծել: Ինչպես նկատել է Ս. Մարգարյանը, Խալափյանն այստեղ հանդես է բերել «ժա-մանակի ու միջավայրի խոր զգացողություն»<sup>1</sup>: Շեշտենք՝ ոչ այնքան իմացություն, որքան զգացողություն:

Եվ այսպես Արան մերժում է Բուցի-Հուրի անունով կնոջը: Այստեղ ահա, երևում են Տերյանի և Զարյանի տողերից մեզ ծանոթ Արայի խառնվածքի գծերը՝ Արան հպարտ է և չի հանդուրժում, որ «կեղծ Շամի-րամը» հրամայի իրեն. «Ինձ մի հրամայիր, թեկուզ թագուհի ես, ես ինքս եմ արքայազն» (67): Արան առաքինի է նաև, քանզի գիտակցում է, որ իր առջև մերկացողն ուրիշի կինն է, իսկ ինքը հյուր է սուկ: Նինոսը,

<sup>1</sup> Մարգարյան Ս., Պատմության ժամանակը, Ե., 2000, էջ 126:

իմանալով Արայի առաքինության մասին, հանդարտվում է և առյուծի որս կազմակերպում: Արայի կերպարում ևս շեշտված է մահվան բնագրական մղումը: Եթե Շամիրամը սիրո կամ կրքի մեջ է փնտրում մահվան, անգիտանալու, չգոյության բերկրանքը, ապա *Արան*, որպես *արական* սկիզբ, մահվան բնագղն ուղղում է ռազմի, որսի, վտանգի, քանի դեռ չի ճանաչել սերը, որ հարության խորհուրդն է:

Ասացինք, որ Արան ևս աստվածային գծերով է օժտված, և ոչ միայն Շամիրամի ընկալումներում: Նա կանանց հանդեպ ձգտում չունի, քրմերը նրա մասին ասում են, թե հողեղեն չէ, թե «հողածին կանանց կարոտը չէ, որ տխրություն է բերում նրան, նրա մտքերն աստղերի հեռվում են» (74): Երբ արդեն վեպի վերջում Շամիրամն իմանում է, որ Արան որդի է ունեցել՝ Արայան Արան, այսպես է ասում. «Դիարան որդի՛ ունի: Մի՞թե Դիարան հողեղեն էր» (160):

Շամիրամը տեսել է աստվածներին, իսկ Արայի մտքերն աստղային հեռուներում են թափառում: Եթե Շամիրամի սերը տղամարդկանց համար մեռնել-հառնել է, ապա Արան թշնամու վերքերին պատերազմի դաշտում սպեղանի է դնում, «իսկ սրա բացատրությունը ոչ ոք չուներ» (74): Բացատրությունն Արայի աստվածների զարմից սերելն է: Այս երկու կերպարի մեջ էլ ընդգծվում է երկնային ծագումը: Ինչ վերաբերում է բոլոր այն տղամարդկանց, որոնց Շամիրամի սերը մահ է բերել, ապա դա բացատրվում է նրանց մահկանացությամբ, և Արան է միայն, որ հարություն է առնում, քանի որ մեռնող-հարություն առնող աստված է, ուստի չէր կարող հարություն պարզևող աստվածությունը օժտված չլինել նաև հարություն առնելու շնորհով: Այս է պատճառը, որ Մանուկ Աբեղյանը նշում է, թե Արան հարություն է առել ըստ ժողովրդական հավատալիքների<sup>1</sup>, իսկ Խորենացու առասպելում, ինչպես գիտենք, Արան հարություն չի առնում: Արան Հարություն է առնում նաև Խալափյանի վեպում, բայց այդ հարության *գեղարվեստական վարկածին* դեռ կանդրադառնանք:

Եվ այսպես առյուծի որսի ժամանակ Նինոսն անհետանում է: Շամիրամն Արային պահում է իր մոտ, որպեսզի ազատորեն վայելի նրա սերը: Մեռնող Շամիրամն սկսում է հարություն առնել, նա մոռացել է բոլոր տղամարդկանց. «Ես չեմ հիշում որևէ տղամարդ», – ասում է Շամիրամը և հավատում, որ մինչև Արան, դեռ «ոչ մի տղամարդ չի մոտեցել իմ մարմնին, բացի նա, որի համար ծնվել եմ իմ աստվածուհի մորից» (110): Սա առաջին անգամ իսկապես սիրող կնոջ այն հոգեբանությունն է, որով կինն իրեն զգում է անաղարտ: Շամիրամը կորցրել է հիշողությունը,

<sup>1</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. 9, Ե., 1968, էջ 43:

«մոռացել» իր անունը. «Ինչի՞ս է պետք որևէ անուն, անգամ իմ անունը պետք չէ ինձ, ես ապրում եմ առանց անցյալի ու անվան» (111), նա այլևս թագուհի չի զգում իրեն. «Ես ոչինչ չունեմ, աշխարհի ամենաաղքատ կինն եմ ես, բայց ամենաերջանիկը, քանի որ սիրող կին եմ ու ամեն ինչ ունեմ այլևս» (111): Նա կորցրել է իր ես-ի գիտակցումը, սերը ինքնամոռացում է, և առհասարակ այն, ինչ կարելի է ասել սիրո մասին, կարելի է ասել Շամիրամի մասին: Շամիրամը սիրո անվանումն է հենց, սիրո հատուկ անունը: Արան ու Շամիրամը օրուգիշեր սիրում են իրար, և նրանց սերը մահկանացուների սեր չէ, դրա համար էլ նրանց ոչ ոք չի գտնում. «Արային պահողը Շամիրամն էր, նրանից բաժանվել չկա, Շամիրամից դեռ ոչ ոք ողջ ու կենդան չի բաժանվել, բանբերներն էլ նույնն էին ասում, Շամիրամի այս սերն ուրիշ է, նրանք այնպես են սպասել իրար, կարծես մեկը պիտի իջներ երկնքից կամ մյուսը երկինք պիտի բարձրանար նրա մոտ. «Ուստի մի՛ հարցրեք, թե որտեղ են նրանք:

Շամիրամի ու Արայի հանդիպման մասին կան տարբեր պատմություններ, մեկն էլ հայկական առասպելն է, ըստ որի սիրահարները չեն հանդիպել առհասարակ կամ նրանց հանդիպումը նման է աստղի ու մոլորակի հանդիպմանը երկնքում, լուկ երկրից նայողին է թվում, թե երկու լուսատու, մի տղամարդ ու մի կին երկնքում եկան ու անցան իրար վրայով, բայց իրականում նրանք մնում են իրարից նույնքան հեռու, որքան եղել են, և ով կասի, թե կինն ու տղամարդը հանդիպում են առհասարակ, թվում է միայն, թե հանդիպեցին, անչափ մոտ լինելով՝ անչափ հեռու են նորից, և հենց սրա մասին են սիրո բոլոր պատմությունները» (102): Եվ Շամիրամն ու Արան որքան էլ հանդիպեն, որքան էլ սիրեն միմյանց, մնում են օտար: Արան ծանծրանում է, կարոտում իր հայրենիքը, նա ինքն իրեն նմանեցնում է վանդակում փակված թռչնակի, որին տանտերը սիրում է դայալյալի ու սիրուն փետուրների համար: Նա զգում է, որ օտար է բոլորին, և բոլորն օտար են իրեն այդ հողում: Արան օտարության մեջ, առանց իր հողի, մեռնում է, ինչպես արմատից հանված մի տնկի: Նա մեռնում է առանց հայրենի հողի: Արան առաջարկում է Շամիրամին մեկնել իր երկիր, քանի որ «հպատակին սիրելն անհնարին է, տիրակալին սիրելը՝ բնական» (127): Խալափյանի մշակումն իր թևավոր արտահայտություններով Ջարյանի մշակմանը բնավ չի զիջում, և հղկված ձևակերպումների առումով մոտ է Ջարյանի գործին: Մեկ ուրիշ տեղ հայրենիք մեկնել ցանկացող Արան այսպես է ասում Շամիրամին. «Սերը հավասարների երջանկությունն է, մենք հավասար չենք» (136):

Արան, ինչպես գրեթե առասպելի բոլոր մշակումներում, իմաստուն է, խոհեմ ու ողջամիտ. երբ Նինոսի երեք զավակները դավադրություն

են կազմակերպում և պահանջում թագավորությունը, սպառնալով, թե թագուհին ու նրա սիրեցյալը թանկ են վճարելու արքայի արյան համար, Արան այսպես է ասում Շամիրամին. «Ես պետք է մեկնեմ այստեղից՝ հանուն քո երկրի խաղաղության» (126-127): Բայց Շամիրամն Արայի երկրից ծառեր ու ծաղիկներ է բերում և առժամանակ ստիպում մոռանալ հայրենի կարոտը: Արան, մնալով Ասորեստանում, Շամիրամի և Նինոսի որդի Ջամեսեսին նիզականետության արվեստ է սովորեցնում: Ջամեսեսը, կամ Ջամեսոսը, ըստ աղբյուրների, Նինոսի և Շամիրամի որդին է<sup>1</sup>, մինչդեռ վեպում հիշատակված Հյուդասպեսը Շամիրամի որդին է ոչ թե Նինոսից, այլ Օնեսից<sup>2</sup>: Արայի և Ջամեսեսի (անվան տարբերակն ըստ Խալափյանի) միջև թշնամություն է հասունանում: Կարճ ժամանակ անց Ջամեսեսը մահափորձ է անում մոր դեմ՝ նրա վրա նետ արձակելով և, քանի որ, ըստ Աշուրի օրենքի, չի կարելի կանխել արքայազնի արձակած նետը, ապա Ջամեսեսը հարձակվում է Արայի վրա, իսկ Շամիրամն անպատվում է որդուն: «Շամիրամը քաղաքական երկու նպատակ էր հետապնդում. որդուն՝ Աշուրի ապագա արքային դաժանության մեջ դատապարտելով, արդարացնում էր նրա մեկուսացումը, հետևապես և գահին առժամանակ ևս տիրելու իր իրավունքը, ապա թե իր սիրեցյալին բարելացիների աջքում ներկայացնում էր որպես նրանց փրկիչ» (133):

Մի օր Արային գաղտնի այցելում է նրա դայակ Հրարը, որին Արան մոռացել, բայց հանկարծ հիշում է. Հրարը հայոց արքայի և թագուհու մահվան բոթն է բերել. նրա այցը հիշեցնում է նաև Ավ. Իսահակյանի «Հայրենի հողը» լեգենդը: Ասպատակության է ենթարկվում երկիրն առանց արքայազնի. «Խեղճ տարաբախտ արքայազն, չկա նաև քո թագավորությունը, հայրենիքդ օտարների ոտնատակ է... Քո հայրենիքը փլատակների տակ է, այլևս տղաներն ու աղջիկները չեն խմբերգում ու փառաբանում գարունն ու զարթոնք բերող իրենց աստծոն: Մեռյալ է այլևս քո հայրենիքը, մարդիկ հողը լքելով հեռանում են, ասելով, թե պաշտպան չունեն, մեր աստվածը մեռավ և այլևս հարություն չի առնում» (138): Հողը մեռնում է առանց Արայի և Արան ինքն էլ հայրենիքի համար մեռյալ էր և ահա հարություն է առնում: Մարդու և հողի կապը, ինչպես գիտենք, հայ գրականության առանձնահատուկ թեմաներից է, սկսած Փավստոս Բուզանդից մինչև Խալափյան, որ ուշագրավ առասպել է ստեղծում, առասպելի նոր մեկնություն: Արան մեռնում է, Շամիրամն իր

<sup>1</sup> Արծրունի Թ. և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1985, էջ 57:

<sup>2</sup> Սիկլիփացի Դ., Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 14, Հին հունական աղբյուրներ 2, 1985, էջ 21:

«առնալեզներին» հրամայում է կենդանություն տալ Դիարային, բայց նրանք անուժ են գտնվում կյանքի կոչել հերոսին: Գրողը հարալեզներին խորամխտ նկատառումով է փոխարինել գոեհիկ «առնալեզներով»՝ ցույց տալու համար, թե կիրքը, առանց սիրո, անկարող է հարություն տալ մեռյալ պատանուն: Արայի դին գողանում և բերում են հայրենիք, ծմեռն անցնում է, գալիս է գարունը, տարածվում է լուրը, թե «Հայաստանի հողը հասնելով, հայոց թագավոր Արա Գեղեցիկը հարություն է առել, նրան կյանք տվող հողը կրկին կյանք է պարգևել նրան, նա ելել ու քայլել է, մնացած ճանապարհը գնալով ոտքով ու զրուցելով իր ուղեկիցների հետ ու դիտելով շրջակայքը» (157): Այսպիսին է Արայի հարության խալափյանական առասպելը: Այստեղից է սկսվում Մովսես Խորենացու հաղորդած առասպելի վիպականացումը, բայց Խալափյանի մոտ ոչ թե Շամիրամն է Արայի դեմ ելնում, այլ նրա որդի Ջամեսեսը: Արան տիրանում է իր երկրին, ամուսնանում Նվարդի հետ, կերպար, որ վեպում չի երևում: Բայց Շամիրամի շնորհիվ է, որ Արան ճանաչել է սերը: Պատահական չէ, որ հայ ժողովուրդը, հիշեցնում է հեղինակը, սիրեց Շամիրամին: Մորը սպանել ցանկացող Ջամեսեսին Օնեսն ասում է. «Մի՛ սպանեք Շամիրամին, նա էր, որ սերն աշխարհ բերեց» (173): Եթե Շամիրամը նույնացվում է սիրո հետ, ապա Արան «հենց նույն հայ ժողովուրդն է, նրա հոգևոր ու մարմնավոր կերտվածքի նախաստեղծ տիպարը» (169),-գրում է Խալափյանը: Հեղինակը ոչ միայն «նոր առասպել» է ստեղծում, այլև առասպելի նոր մեկնություն է տալիս, մեծ ծանոթ առասպելին նայում այլ տեսանկյունից:

2. Խալափյանը վեպում պատկերային ուշագրավ լուծումներ է գտել: Այսպես, պատմագրության մեջ Նինոսի վախճանից բացի նշվում է նաև նրա Կրեստե կղզի փախչելու վարկածը<sup>1</sup>: Խալափյանի մոտ Նինոսը Շամիրամի կողմից առյուծների որսի ժամանակ փակվել է լաբիրինթոսում: Այս լաբիրինթոսի պատկերը հեղինակին հավանաբար հուշել է Կրեստե անունը, որ հայտնի է Դեդալոսի կառուցած առասպելական լաբիրինթոսով, գուցե նաև իննսունականներին առաջին անգամ հայերեն թարգմանված արգենտինացի գրող Խորխե Լուիս Բորխեսի պատկերները՝ արքա և լաբիրինթոս, պատահական չէ, որ վեպի վերջը ճշգրտորեն կրկնում է Բորխեսի բազմաթիվ պատմվածքներում նրա հերոսների կողմից հաճախակի կրկնվող ճակատագրին խաբելու հնարանքը և հատկապես «Իր լաբիրինթոսում վախճանված Աբենխական էլ Բոխարին» պատմվածքը, որի հերոսն այնպես է անում, որ իր փոխարեն իր

<sup>1</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1981, էջ 61:

կառուցած լաբիրինթոսում սպանվի մեկ ուրիշը: Ահա և Խալափյանի վեպի վերջը<sup>1</sup>. «Նինոսի որդի Ջամեսեսի թագավորության տարիներին Օնեսը դեռ ապրում էր, ու երբ արքունի աստղագուշակները արքայի մոտակա հարյուր օրում մահ գուժեցին, ըստ աշուրական հնագույն մի սովորության՝ ճակատագրին խաբելու համար Օնեսին նույն ժամկետով արքա օժեցին, և դա կոչվում էր՝ դրածո արքա: Ժամանակավոր կամ դրածո արքա լինելը մեծագույն պատիվ էր, որին արժանի համարվեց արքունի գերդաստանին այդքան մերձ պալատականը, որպես Նինոսի դստեր և Ջամեսես արքայի քույր Սոսանեի ամուսին: Հարյուր օր նա տիրում էր իրական կամ ծիսական իշխանությանը, ոսկե մականը ձեռքին, արքայական զգեստներով բազմում գահին, որ նրա երազանքն էր: Հարյուրերորդ օրը նրան զլխատեցին, արքայական պատիվներով և լացուկոծով հանձնեցին հողին: Այսպիսով գուշակությունը կատարված համարվեց և Ջամեսես արքան խուսափեց ճակատագրի վճռից» (174):

**Բանալի բառեր.** սիրավեպ, առասպել, կերպարանափոխվել, աստվածություն, գաղափարական միպոս, գեղարվեստական արվածություն, պարմագրական տեքստ:

*Казарян Лилит*

### Роман З. Халапяна “Ара прекрасный и Шамирам”

#### Резюме

Роман интерпретируется в творческой системе писателя, переоценивается и дает оценки в современном литературном процессе.

*Ghazaryan Lilit*

### Novel “Ara the Beautiful and Semiramis” by Z. Khalapyan

#### Summary

The novel is interpreted within the writer’s artistic system, it is estimated and assessed in the contemporary literary process.

---

<sup>1</sup> Թերևս ավելորդ չէ նշել, որ Օնեսն ըստ պատմական աղբյուրների ինքնասպան է եղել: